



## Մամուլի հաղորդագրություն

27-ը ապրիլի  
2011թ.

«Թանգարանների եվրոպական գիշերը» իրականացվում է 2005 թվականից՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպայի խորհրդի,

իսկ այս տարի՝ նաև ԻԿՕՄ-ի բարձր հովանու ներքո :

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանն արդեն 7-րդ անգամ կկանգնի եվրոպական մեծ ու փոքր թանգարանների կողքին և կդառնա այդ անակնկալներով լի գիշերվա մասնակիցը :

Թանգարանների միջազգային օրվան ընդառաջ՝ արձագանքելով Ֆրանսիայի մշակույթի նախարարության համաեվրոպական մուլտիմեդիա նախաձեռնությանը՝ արգելոց-թանգարանը մասնակցում է նաև «Մեկ ցուցանմուշ, մեկ պատմություն» էլեկտրոնային ինտերակտիվ ցուցահանդեսին՝ համացանցի միլիոնավոր այցելուների ներկայացնելով 1959թ. Էրեբունի միջնաբերդից հայտնաբերված «Նժույզը որսից հետո» որմնանկարը: Ցուցահանդեսը մատչելի է Գիշերվա պաշտոնական վեբ-կայքում՝ <http://nuitdesmusees.culture.fr/unc-oeuvre-unc-histoire/les-chevaux-durartu/> հասցեով :

1968թ. հոկտեմբերի 19-ին Երևանն աշխարհին պաշտոնապես ներկայացրեց իր ծննդյան վկայականը՝ ուրարտական արքա Արգիշտիի կողմից արված սեպագիր արձանագրությունը Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին : «Էրեբունի-Երևան» 1-ին տոնակատարությունը դարձավ աննախադեպ մշակութային միջոցառում, որը նոր շունչ հաղորդեց մայրաքաղաքին, դարձավ անբաժանելի համայն հայության արժանապատվությունից ու հպարտությունից, դարձավ Երևանի տոնն ու այցեքարտը : Ու այդ տոնը ներկա ու գալիք սերունդների համար կերտեցին մարդիկ՝ բարձրաստիճան պաշտոնյայից, հնագետից, ճարտարապետից, նախագծողից, զանգվածային լրատվամիջոցներից մինչև Էրեբունի հնավայրում աշխատող շինարար-բանվորը՝ բոլորը միակամ, որ Երևանն իր արժանի տեղը զբաղեցնի աշխարհի հնագույն քաղաքների շարքում :

Թանգարանների միջազգային օրվա առթիվ ԻԿՕՄ-ի կողմից առաջարկվող «Թանգարանը և հիշողությունը» կարգախոսին ընդառաջ՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը 2011թ. մայիսի 14-ին կմիանա «Թանգարանների եվրոպական գիշեր» նախաձեռնությանը՝ **«Առաջին Էրեբունի-Երևանը. ռետրոսպեկտիվ»** միջոցառմամբ : Արգելոց-թանգարանն իր տոնը կնշի այնպիսի գործընկերների հետ, ինչպիսիք են՝ Հայաստանի ազգային արխիվը, Հայաստանի

ազգային գրադարանը, «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» հասարակական կազմակերպությունը, «Ֆոտոլուր» գործակալությունը, Հայաստանի ակադեմիական երգչախումբը :

Փորձելով թարմացնել մեր հիշողությունը 1-ին «Էրեբունի-Երևանի»-ի մասին՝ կազմակերպիչները վստահ են, որ հետադարձ հայացքը դեպի 1968-ի աշունը ոչ միայն հաճելի հուշեր կարթնացնի, այլ նաև կհիշեցի, որ Երևանը սկսվում է Էրեբունի քաղաքամրոցից, որի պահպանությանը պետք է նպաստենք բոլորս՝ յուրաքանչյուրիս տրված իրավասությունների շրջանակում :

Միջոցառումը նախատեսում է հանդիպում 1-ին Էրեբունի-Երևանի կազմակերպիչների հետ: Երեկոյին իր մասնակցությունը կբերի Հայաստանի ակադեմիական երգչախումբը, որի կատարմամբ թանգարանի առջևի հարթակում կհնչի Երևանի հիմնը՝ «Երևան Էրեբունին»:

Միջոցառման նպատակն է արգելոց-թանգարանի գիշերային այցելուներին հիշեցնել ոչ միայն 1968-ի հոկտեմբերյան Երևանի տոնական շունչը, այլ նաև հազարամյակների խորքից եկող Երևանի ուղերձը. լինել հնամենի քաղաքի բնակիչ, ավելի հին հավերժական քաղաք Հռոմից, չի նշանակում միայն ապրել այդ քաղաքում: Դա նշանակում է նաև լինել սեփական քաղաքի պատմության մեկնաբանը և այդ պատմության կերտման նորօրյա մասնակիցը: Միջոցառումը կներկայացնի ցուցահանդես և արխիվային փաստաթղթերի, լուսանկարների, կինոժապավենների, պարբերական մամուլի նյութերի և հուշերի վրա խարսխված տեսաշար՝ ռետրոսպեկտիվ դեպի Էրեբունի-Երևանի 1-ին տունը և հասարակական հիշեցում այն մասին, թե որքան մեծ է Էրեբունի հնավայրի նշանակությունը Երևանի դիմագծում :

***«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան***